զի լիցի նմայ օգուտ, որպէս որ ես առնէյի վասն մուսիու Պօռէկարին[19]: Իբրեւ տեսին նոյն դռան եղօղ ֆռանկքն զգործս նորա, չարացան եւ գրգռեցին զդեսբանն հանել զնայ յիւրմէն եւ կամ սպառնալ նմայ: Պատասխանեց նոցա դեսբանն եւ ասաց. եթէ նայ կամի յելանել յինէն, /209b/ գրկեմ զնայ, փոխանակ սպառնալոյ համբուրեմ զոտս նորա, վասն զի ամենայն ինչ իմաստութեամբ գործէ եւ ջանաց վասն իմ շինիլ շահ եւ այլ: Եղեւ մինչեւ անկաւ յերկիրն ի ձեռն Աղուանից, կտրեցաւ յամեն[ա]յն եկամուտն, հատաւ յոյսն դեսբանին ապրելոյ ի ձեռն մեծամեծ տրտմութեանն կաթիլ հոսանաց զեկոյց դեսբանն այն եւ եղեւ անդամալոյծ: Ամենայն ոք թողին զնայ եւ գնացին, մինչ որ յիւր էխպայրն թողից զնայ եւ գնաց, բազում գովութեանց արժանի Ներսէսն պաշտեց զնայ իւր թօշակօքն այնքան, մինչ որ բացան ամենայն ճանապարհ, ապա թէ ուղեւորեց զանդամալոյծն այն, որ գնաց ի Ֆռանս: Զկնի այնքան ժամանակաց անցելոց ցերբ ես եկի ի Իսպահան, տեսի զՆերսէսն: Զկնի բազում բանից ասաց ինձ Ներսէսն, թէ ես իմ ծառայութեան վարցն չեմ յուզել, միայն թէ զոր ինչ որ իմ դրամն ծախեցի վասն նորա, զայն պահանջեմ: Զանձրացայ գրելով, ոչ առաքէն զիմ դրամն. թագաւորն ասէ, թէ՝ թող հատուցանէ յիւր էխպայրն, էխպայրն կասէ, թէ՝ թագաւորին բանին համար է իմ էխպայրն այն պարտ արել. ես ոչ կամիմ տալ: Այսպէս եղեւ իմ գործոց հատուցումն, ահա ես ծերացայ, ոչ կարեմ գնալ անդ եւ որ նոքայ Աստուծոյ ոչ երկնչին, ոչ գիտեմ, թէ որպէս պարտիմ ապրիլ եւ կամ պահել զտղայքն իմ: Այսպիսի տրտմութեամբ մեռաւ /210a/ Ներսէսն:

— Երրորդ զիմ բանն, թէ որպէս սկսեցի, որպէս աշխատեցայ, վերչն զինչ արարին ընդ իս, որ յայտնի յէ ամենայն աշխարհի, որպէս որ վերո[յ] պատմի զիմ արարն եւ հատուցումն նոցա:

Հ. Այտ աշխարհականաց եւ թագաւորաց արարն է, երբեմն պատահի, որ այտպիսի զրկանք գործեն, բայց մեր կրոնաւորքն ընդէ՞ր պարսաւիս:

Պ. Բազումք են եւս արարն կրոնաւորացն ձերոց եւ անթիւք, բայց ես յայտնեմ աստ քեզ չորիս իրս, զորս ես գիտեմ եւ վկայեմ զորս տեսի աչօք իմօք: Նախ այր ոմն օլթեցի Ասլան անուն, այրի, ամենեւին հաւատարմաբար ծառայեաց Դավրեժու քափուչինացն: Զկնի ժամանակաց հանին զնայ յունայն եւ ոչ հատուցին նմա վարձ, պատճառեցին, թէ՝ դուն հաղող ճմլես եւ գինին վաճառես: Պատասխանէր այրին պատրի՝ ոչ է ամօթ եւ ոչ է արգիլեալ, ես այլ ուրիշ վարք չունիմ, որ գործեմ, միայն թէ այս արդար վաստակօքն կամիմ շահիլ ինչ եւ տալ աղքատաց, մանաւանդ որ իմ ընտանիքն աղքատ են, կամիմ օգնել նոցա, բազում անգամ դուք վաճառեցիք: Պատասխանեցին նմայ, թէ՝ մեք պատճառ ունիմք, յերբոր ժամանեմք, նոր գինուն հինն վաճառեմք, զի մի քացախի:

Հ. Այտ իրաւ է, քափուչինքն պարտական չէյին նմայ վարձ տալ, քանզի ինքն խոստացել էր ձրի ծառայել վանուցն մինչ ի յիւր մահն, որպէս որ կրոնաւոր ոք:

/210b/ Պ. Ապա ընդէ՞ր ոչ պահեցին զնայ մինչեւ ի մահ, այլ տարադէպ հանին զնայ:

Հ. Որ ոչ հնազանդեցաւ հրամանաց մեծաւորաց, վասն այնորիկ ոչ կարէցին յաւել պահել զնայ, ինքն պատճառ եղեւ, որ հանին զինքն:

---

19 Bearegard (Бургаръ, Борегардъ, Боригар[дов], Պօռեկար եւ այլն) — ֆրանսիացի զինուորական, 1707 թուականից Իսպայէլ Օրու դեսպանագնացութեան քարտուղար: 1709 թ. Եղիա Մուշեղեանի հետ միասին Մոսկուա էր տանում Օրու նամակը՝ ուղղուած իշխան Գագարինին եւ կանցլեր Գոլովկինին (մանրամասն տե՛ս **Г. А. Эзов.** *Сношения Петра Великого с армянским народом*, СПб., 1898, стр. 249, 251, 267, 283, 287-288, 320-321; *Армяно-русские отношения в первой трети XVIII века*. Сборник документов. Том II, часть I, Под ред. Ашота Иоаннисяна, Ереван, 1964, док. 123, стр. 287-289, док. 129, стр. 298-304): Աւելի ուշ Արեւելահնդկական առեւտրական ընկերութեան կառավարիչն էր Թաւրիզում, իսկ օգնականը՝ Եղիա Մուշեղեանը: Վերջինիս թողած գրական ժառանգութիւնը վկայում է նրանց ամենեւին էլ ոչ անամպ յարաբերութիւնների մասին: